



ԲԱՉՄԱՎԷՊ

Չ. ՏԱՐԻ. ԹԻՒ 24.

1848

ԴԵՆՏԵՄԲԵՐԻ 15.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԲԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Արար խօսելոյ :

Ան պարտ է շատ ոչ խօսիլ, և զայլոց բան՝ իւր բանինն՝ ի դերև ոչ հանել :

Եթէ որ պատմութիւն ինչ կամ ճառ առաջի արկեալ ասէ, և գիտակ է, զգիտութիւն իւր ոչ յայտնէ, մինչև նա կատարէ զբան իւր :

Եւ զբան որ յայլմէ հարցանեն, պատասխանի ոչ առնէ : Եթէ հարցումն ինչ ՚ի մէջ բաղմաց լինի՝ յոր մերձ կայ, յառաջ բան զայլն ոչ պատասխանէ :

Եթէ որ սկիզբն առնէ պատասխանել, և կարող է այլ աղէկ պատասխանի տալ, լռեսցէ՝ մինչ առաջինն կատարէ . յետոյ ապա զպատասխանին տայ, այն պիտի կերպիւ, որպէս զի զառաջնոյն բանսն ոչ աղարտիցէ :

Եթէ երկուք ոմանք ընդ միմեանս դատարկաբանեն, ոչ հետևի նոցին . և

եթէ ծածկեն զբանն՝ ունկնդրութիւն ոչ գողանայ . և մինչ ՚ի յայն որ ՚ի կցորդութիւն ոչ կուչեն, ՚ի մէջ ոչ անկանի :

Ինդ մեծամեծսն՝ մեծարանօք զրուցել, և զձայնն ոչ բարձր և ոչ խոնարհ, այլ չափաւոր ունել :

Եթէ նուրբ տեսութիւն ունիցի բանն իւր, ՚ի մեկնութիւն բանին յայտնի օրինակաւ ջանայ խօսիլ, և զսահման կարճախօսութեանն պահեսցէ, և բայ և բառ օտար՝ որ ոչ է ՚ի գործ եկեալ, ՚ի ներքս ոչ մուծանէ : Եւ զբան ինչ որ ընդ ինք զրուցեն, մինչ ՚ի յաւարտն՝ ոչ սկսնու ՚ի պատասխանին, և զոր ինչ կամի ասել, մինչև ՚ի միտքն ոչ խօկայ, ՚ի լեզու ոչ բերէ : Եւ երկայնաբանութիւնն ոչ առնէ . միթէ հարկ լինի, և թէ հարկի՝ շուտական բան ոչ ասէ :

Այս եթէ ցասնու բանիւք , զպարանոցին շարժեին բաւական համարի , և զխառնուածն իւր ոչ այլայլէ :

Այս 'ի յամենայն ժողով , ըստ պատշաճի զբանն կարգէ : Այս մէջ խօսելոցն ձեռօք աչօք և յօնօք ոչ առնէ . միթէ յարմարի ընդ բանն , նա չափաւոր առնէ ըստ կերպի բարեձեւութեան : Այս ընդ ճշմարիտն և ընդ սուտն որ լինի 'ի ժողովն ոչ յանդգնի հակառակութիւն , մանաւանդ հետ մեծամեծաց , և շաղակրատողաց : Այս ընդ ումեք որ բանի տեղի ոչ ունի' ոչ ասէ :

Այս 'ի տրամաբանութեան , եթէ միւսն քան զմիւսն առաւելու , ճշմարտութեամբ իրաւունս տալ պարտ է : Այս 'ի զրուցելոյ հետ ռամկաց և տղայոց և կանանց և յիմարաց և յարբեցելոց , որքան հնար է զգուշացի : Այս բան բարակ ընդ ումեք որ ոչ իմանայ' ոչ խօսի : Այս 'ի խօսելն զյօդ պատուոյն միշտ պահէ , և շարժմանց և բանից և գործոց ամենեւին բանիւ ոչ լինի , և աղիւրն ոչ խօսի :

Այս յորժամ առաջի մեծամեծաց երթիցէ՝ զսկիզբն բանին այսպէս բարեք կարգէ , որպէս զի 'ի բարի հմայութիւն և 'ի գովեստ համարի : Այս 'ի չարախօսութեան և 'ի զուր ասելոյ և 'ի սուտ խօսելոյ միշտ զգուշացի , որ բնաւ ոչ հետեւի , և ընդ այնպիսեացն որ զայս սովորութիւնն ունին' ոչ յարակցի : Այս պարտ է զի լսելն իւր առաւելու քան զխօսելն . քանզի հարցաւ իմաստասեր ոմն , եթէ ինչպէ՞ր զլսողութիւնդ քան զխօսելդ առաւել ունիս , պատասխանէ . Ասն զի լսելիք կրկին տուաւ , որ երկու այնչափ լսեմ' զոր կուստես , և լեզու մի :

Արար շարժման և հանգստեան :

ՊԱՐՏ է 'ի յընթացն' ոչ թեթեւ երթալ և ոչ փութով , քանզի այն նշանակէ զթեթեւամտութիւնն' այսինքն է զտայշուութիւնն : Այս 'ի յամր ընթանալն' ոչ առաւելու , զի այն նշանակէ զծուրութիւնն , այլ 'ի կերպ համեստի ընթացի . և որպէս կանայս և ներքի-

նիս զթիկունսն ոչ շարժէ . և զերկուսն բազուկն հաւասար անձինն պահէ , և զգուշացի յերթեակ առնելոյ զձեռան . զչափաւորութիւն յամենայն ներկայումսն պահեացէ :

Այս յորժամ 'ի յընթացս է՝ յողով անգամ յետոս ոչ նայի , քանզի այն իսկ են գործք կասկածողաց . նոյնպէս և զգլուխն 'ի կոր ոչ պահեացէ միշտ , քանզի այն նշանակէ զխորամանկութիւն և զտրտմութիւն : Այնպէս և 'ի ծունկն իջանելով , չափաւորութեանն հետեւի . և յորժամ նստի զոտն ոչ պարգէ , բայց 'ի յառանձին տեղւոյն թէ կամի , և զմիւս ոտքն 'ի վերայ միւսոյն ոչ դիցէ , և 'ի վերայ ծնկաց ոչ նստի . միթէ 'ի ծառայութիւն իշխանաց , և վարդապետին իւրոյ , և հօրն , և նոցա՝ որք սոցին աստիճանակիցք են : Այս զգլուխն 'ի վերայ ծնկացն , կամ ձեռացն ոչ դիցէ , քանզի նշան է տրտմութեան և մեղկութեան . և ընդ մօրուսն և ընդ այլ անդամնն ոչ խաղայ , և զմատն 'ի բերանն և յունգունսն ոչ ածէ . և 'ի յօրանջելոյ և 'ի ճապկոտայոյ զգուշացի . և 'ի զկատայոյ և յայլ ձայնէ որ 'ի փողացն ելնէ՝ զգուշացի . և առաջի մարդկան զքիթն ոչ խնչէ , նոյնպէս և թուք որչափ և կարէ զգուշացի , և թէ այսոց զորս ասացաք վերոյ՝ հարկ լինի և ոչ կարիցէ արգելուլ , այնպէս արասցէ զի անպարկեշտ ձայն մի չունիցի :

Գատարկ ձեռօք և թեղնօք , և ստորոտիւք հանդերձին զքիթնն ոչ մնարէ , և 'ի թքանելոյ բազում որքան կարէ՝ զգուշանայ : Այս յորժամ երթայցէ 'ի հրապարակ , ճանաչեացէ զտեղիքս , ոչ 'ի բարձրագոյն բարձին և ոչ 'ի ներքին , այլ յարժանն . և եթէ զլուխ ժողովոյ իցէ՝ ուր կամի անդ բազմի , զի ուր նա նստի՝ այն է ընտիր տեղին . եթէ օտար ոմն է՝ և յիւր աստիճանն ոչ է նստիլ , յորժամ իմանայ՝ փութով զտեղի իւր կալցի . և եթէ զտեղի իւր դատարկ ոչ տեսնու , ջանայ նախ քան զճանրանալ այլոց 'ի վայր իջանել :

Իւրաջի մարդկան քան զձեռք և զերես այլ մասն մերկ ոչ ցուցանել . առա-

ջի մեծամեծաց զբազուկան և զսրունան ոչ մերկացուցանել . առաջի մարդկան ոչ ընկողմանիլ , և յորսայս ոչ պառկել , միթէ 'ի քուն ոչ գիտնելով շքլի , զի այս պատճառէ զխորդալ . մերժէ զքունն կամ զրուցելով կամ խոկալով : Եթէ այլքն ննջեն , և ինքն ննջէ , և կամ արտաքս ելանէ , և այնպէս հնարի որ մարդ յիրմէ տաղտկայ ոչ :

ՈՍԿԻՓՈՐԻԿ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ ԺԹ

Երկուստեք ընդիմ :

Երկուստեք ճարտարութեան գործիքներուն մէկն ըլլալով , յայտնի է թէ իրեն շատնալը կամ պակսելը՝ թէ ճարտարութեանց ընթացքին և թէ իրեն շահուն վրայ որչափ ազդեցութիւն կ'ունենայ :

Երկուստեք ընդիմ ընդհանուրութեան մը ձեռք չի գարնուիր . ուստի ամէն գործառու պէտք է որ կամ իրեն քրտինքովն ու ինայութեամբ յառաջուցմէ զիզած ինչք ունենայ , և կամ ընչատուէ մը փոխ առնու : — Ինչք փոխ առնելու սովորութիւնն ընդհանրապէս ամէն երկիր կայ , բայց աւելի ան երկիրներու մէջ ուր որ քաղաքականութիւնը յառաջագէմ է . միայն աս տարբերութիւնը կայ որ ընչից եկամուտը աւելի նուազ է ան երկիրներուն , քան թէ յետնեալ աշխարհաց մէջ :

Ինչքն , ինչպէս որ ըսինք , ճարտարութեանց գործիք մըն է . բայց աս գործիքը զանազան մասերէ բաղկացած է . որ են դրամ , մեքենաներ , տեղ , կենդանիք , շէնք , և այլն : Գործառու մը կրնայ աս զանազան մասանց այլ և այլ կտորներուն կարօտ ըլլալ . ու որ կտորին որ կարօտ է զայն կը վարձէ ,

բայց սովորաբար ընչից դրամական մասին , որ դրամաբան կ'ըսուի , աւելի կարօտ ըլլալով , մեր խօսակցութիւնն ալ աւելի անոր վրայ պիտի ըլլայ հատուածիս մէջ :

Երկուստեք ընդիմ ընչից չափը որոշողը ընծայման և պահանջից օրէնքն է . կամ թէ ըսեմ , ընծայման և պահանջից օրինաց համեմատ է ընչից չափն , որ նաև ամենայն բերոց գինը կ'որոշէ : — Դարտարութեանց բանուկ ժամանակը երբոր հետամտութիւնը ինչպէս որ պէտք է գործունէութեան մէջ է , հարկաւ գործառուաց կողմանէ դրամագլխոյ պահանջն , այսինքն դրամագլուխ ուղելը կը շատնայ . որով դրամագլխոց շահն ալ կ'աւելնայ : Ինչհասկառակն երբոր ճարտարութիւնը նուազին , գործառուները շատ տեսակ գործառուութիւններէ ձեռք քաշելով , ինքնին դրամագլուխներէն շատերն անգործ կը մնան . և ընչատուք իրենց դրամագլուխները բոլորովին անպտուղ չձգելու համար , նուազ շահով ալ կ'ուզեն տալ . որով ընծայումը կը շատնայ : — Երկուստեք չէ հետեցընել թէ ուրեմն որ երկրին մէջ որ քիչ է դրամագլխոց ընծայումը , և անոնց շահը բարձր , ճարտարութիւնը առաջ գացած են : Երկուստեք դրամագլուխը շատ աւելի դժուարաւ կը գտնուի Եւրոպոյ այլ և այլ տեղութեանց և Ամերիկոյ մէջ , ինչպէս որ կը վկայեն բանիբուն տնտեսականք , քան թէ Ասիոյ և Արևելոյ մէջ . և միթէ աւելի ճարտարարութեամբ են ան երկիրներն աս վերջի աշխարհքներէս : Երկուստեք բարգաւաճանաց նշան չըլլալէն զատ , նոյն երկիրներուն ետ մնացած ըլլալը կը ցուցնէ . վասն զի երկրի մը տեսչութեան կերպն , ընկերութե կանոններուն թերութիւնները , բնակչաց ազիտութիւնը , կցորդութեան ճամբաներուն նուազութիւնը պատճառ կ'ըլլան որ դրամագլխոց թիւը քիչ ըլլայ , և վաշխերնին շատ աւելի բարձր : Պոլիս կարծեմ

1 L' offre et la demande.